Եղե՛ք իրազեկ: Եղե՛ք ներգրավված: Մասնակցե՛ք մարդահամարին:

# Ձեր 2020թ. մարդահամարի ուղեցույցը Առողջապահական ծառայություններ մատուցողների համար

## Ինչու՞ է մարդահամարը կարևոր առողջապահական ծառայություններ մատուցողների համար:

Կլինիկաները, առողջության ապահովագրական ընկերությունները, տեղական կառավարությունները և համալսարանները հիմնվում են մարդահամարի տվյալների վրա՝ քաղաքականությունների, համայնքի կարիքների գնահատման և այլնի վերաբերյալ տեղեկացված որոշումներ կայացնելու համար:

Բնակչության 2018 թվականի մարդահամարի հաշվարկների համաձայն՝ Լոս Անջելեսի 65 տարեկանից ցածր բնակչության 17.2% -ն ապահովագրված չէ: Մարդահամարի տվյալներից ստացված տեղեկությունները օգնում են ֆինանսավորել այնպիսի կարևոր ծրագրեր, ինչպիսիք են Մեդիքեյդ, Մեդիքեյեր մաս Բ, Կանանց, նորածինների և երեխաների համար լրացուցիչ սնուցման ծրագիր (WIC), Երեխաների առողջության ապահովագրության ծրագիր (CHIP), առողջապահական կենտրոններ, և ավելին: Կալիֆորնիայում (2010 թվականի մարդահամարի տվյալների համաձայն, "Counting for Dollars 2020"), միայն Մեդիքեյդին տրամադրվել է ավելի քան 55 միլիարդ դոլար:

## Ինչպե՞ս են հաշվում հիվանդանոցների կամ ինտերնատների հիվանդներին:

Բոլորին պետք է հաշվել, այնտեղ որտեղ նրանք ապրում են կամ քնում ժամանակի մեծ մասը 2020 թվականի ապրիլի 1-ի դրությամբ (Մարդահամարի օրը) կամ մինչ այդ: Հիվանդանոցներն ու ինտերնատները համարվում են խմբային կացարաններ: 2020 թվականի սկզբին U.S. Մարդահամարի բյուրոյի ներկայացուցիչները կհաղորդակցվեն ձեր ղեկավարության հետ՝ հասկանալու, թե արդյոք ձեր հաստատությունը ծրագրում է ուղղակիորեն տվյալներ ներկայացնել Մարդահամարի բյուրոյին կամ արդյո՞ք նշանակված աշխատակիցները հիվանդներից կհավաքեն մարդահամարի հարցաթերթիկները:

## Արդյո՞ք հարցաթերթիկը հասանելի կլինի այն հիվանդներին, որոնք անգլերեն չեն խոսում:

Այո: Առցանց, հարցաթերթիկը հասանելի կլինի այս 12 լեզու ներով՝ իսպաներեն, չինարեն (պարզեցված), վիետնամերեն, կորեերեն, ռուսերեն, արաբերեն, թագալերեն, լեհերեն, ֆրանսերեն, Հայիթիի կրեոլերեն, պորտուգալերեն և ճապոներեն: Մարդահամարի թեժ գիծը նաև օգնություն կտրամադրի այդ լեզուներով և խուլերի համար նախատեսված հեռահաղորդակցման սարքի միջոցով:

Թղթային հարցաթերթիկները հասանելի կլինեն անգլերենով և իսպաներենով:

Լեզուների բառարանները և տեսանյութերը, ինչպես նաև տպագիր ուղեցույցները հասանելի կլինեն 59 ոչ անգլերեն լեզուներով, այդ թվում՝ ամերիկյան նշանների լեզու, Բրեյլի գրեր և մեծ տպագիր:

Los Angeles քաղաքը մատչելի հարմարություն(ներ) կտրամադրի՝ հաշմանդամություն ունեցող մարդկանց համար իր ծրագրերի, ծառայությունների և հաստատությունների հավասար հասանելիությունը երաշխավորելու նպատակով:Պահանջ ներկայացնելու համար կապվեք ՊՆ Հաշմանդամության Դեպարտամենտի հետ՝ DOD.Contact@lacity.org-ով կամ (213) 202-5668-ով հինգ կամ ավելի աշխատանքային օր առաջ:

Eric Garcetti @MayorOfLA

census.lacity.org

#2020Census